

ՂԵՒՈՆԻ ՎԱՐԴ. ՓԻՐՂԱԼԻՄԵԱՆ

(Կենսագրական ակնարկ)

I

1901 թ. մայիս ամսին Երուսաղէմի խուցերից մէկում վախճանուեց մի բազմաշարժար, համեստ հոգևորական՝ Ղևոնդ վարդապետ Փիրղալէմեանը։ Շատ քչերն են ծանօթ այդ հոգևորականի կեանքին ու գործին։ Կան այնպիսի մարդիկ, որոնց բախտը չի ժպտացել, որոնց անունն ու համբաւը չի տարածուել, որոնք այնուամենայնիւ շատ են աշխատել և կատարել իրանց գործը մինչև վերջի շունչ անդրդուելի հաւատով։ Այդ մարդկանցից էր և Ղ. վ. Փիրղալէմեանը։ Նա հակառակ իր ջերմ ցանկութեան չը կարողացաւ կենդանութեան ժամանակ հրատարակած տեսնել իր ամբողջ տասնեակ տարիների «տաժանելի աշխատութեամբ» գլուխ բերած երկերը։ Նա շատ դիմումներ արեց այսուայն կողմը, գնաց անձամբ զանազան տեղեր՝ ս. Էջմիածին, Թիֆլիս, Կ.-Պոլիս, Երուսաղէմ և այլն, բայց մի քանի գիրք հազիւ կարողացաւ ի լոյս ընծայել։ Նրա մահուանից յետոյ մեր թերթերում մի քանի ակնարկներ եղան նրա աշխատութիւնների մասին, բայց դեռ մինչև այժմ նրանք մնացել են անյայտ բանասէրներին։ Մի քանի տարի առաջ Վեհափառ Հայրապետը հրամայեց բերել Կ.-Պոլսից, ուր մնացել էին վերջին անգամ Երուսաղէմ գնալիս՝ նրա բոլոր աշխատութիւնները, բայց դժբախտաբար չնչին՝ մասը միայն հազիւ տեղը հասաւ, իսկ մնացած աւելի կարևորը զանազան տարեգրութիւններ, 20-ից աւելի, որոնք այնքան նշանակութիւն ունեն մանաւանդ այժմ, երբ տպագրւում է «Պատմագիրք Հայոց» յայտնի չէ ում ձեռով գաղուած են։ Ցանկանալով միայն,

որ ում ձեռին որ գտնուում են այդ խիստ կարևոր ու մինչև այժմ չը հրատարակուած տարեգրութիւնների դուրս հանելը՝ աւելորդ չի լինի նաև եթէ ընթերցողներին ծանօթացնենք այդ ինքնուս վարդապետի կեանքին ու գործին յիշելով նրա բոլոր յայտնի երկերը, որքան կարողացանք տեղեկութիւններ հաւաքել զանազան տեղերից:

Ղևոնդ վարդ.-ի պապի հայր Փիրղալէմը, որի անունով կոչուում է նրանց տոհմը՝ գաղթել է Պարսկաստանից Նազըր-Շահի օրով և հաստատուել Վանում: Այստեղ նրա ժառանգները կամաց-կամաց այնքան են հարստանում, որ Տաճկաստանի առաջնակարգ վաճառականների կարգն են անցնում և մեծ առուտուր սկսում Ռուսաստանի և Վուրիշ երկրների հետ: Սրանց հարստութեան ճոխ ժամանակ (1829 թ.) ծնւում է Ղևոնդը Վան քաղաքում: Մօր անունն էր Իւղաբեր, հօրը՝ Աւետիս: Բայց մինչ Ղևոնդը 4—5 տարեկան էր, սկսում է դժբախտութիւն դժբախտութեան վրայ գալ. այն մեծ Փիրղալէմեան տոհմը կամաց-կամաց դէպի աղքատութիւն ու անկում է դիմում՝ մասամբ ընական դժբախտութիւնների հանդիպելով՝ մասամբ ժամանակի բարբարոսութիւններին զոհեր տալով: Հետզհետէ այն աստիճանի չքաւորութեան են հասնում, որ ապրում են այնուհետև տարուէտարի ի նպաստ նրանց եկեղեցիներում հաւաքած փողերով:

Ղևոնդ 6 տարեկան եղած ժամանակից յաճախում էր Արարուց ուսումնարան Պետրոս աւագ քահանայ վարժապետի մօտ, որը ժամանակի ամենայայտնի երաժիշտն էր, բայց կեանքի դառնութիւններն ու նեղութիւնները շուտով նրան ևս բաժանում են ուսումնարանից և դեռ 12 տարեկան՝ նա ստիպւում է հաց վաճառակել եթէ ոչ ծնողներին, զոհէ իր համար: Ուստի մտնում է աշկերտ մի դերձակի մօտ, բայց երկար չի մնում այդտեղ, փոխում է հետզհետէ մի քանի • վարպետների և ոչ մի տեղ չի կարողանում բաւականութիւն ստանալ: Յաճախ մենակ կամ ծնողների ու բարեկամների հետ, երկրի սովորութեան համեմատ մօտակայ վանքերը ուխտի գնալով՝ 1850 թ. ի միջի այլոց նա այցելում է Լիմ կղզին և էլ յետ չի դառնում, մտնում է այդտեղ աշակերտ: Թոփուզեան Յակոբ եպիսկոպոսն էր անապատի վանահայրը: Աւելի լաւ շրջան ճարել այդ ժամանակ Ղևոնդի համար դժուար էր, վանահայրը, որի մօտ վիճակուեցաւ կրթութիւն ստանալ, ինչպէս ինքն է ասում «պոէտ» էր. նա իր ցանկացածը գտել էր. այլևս չը կար կեանքի հոգսը, և նա կարող էր այստեղ առաջ գնալ ինքնազարգացմամբ: Բայց այդ ժամանակ մեռնում է նրա հայրը, և նա ընտանիքի

մեծ որդիքն լինելով՝ իր քոյրերի ու եղբայրերի հոգսը պիտի քաշէր. և ահա ճարահատեալ ելնում է կղզուց և առաջին անգամ 22 տարեկան հասակում իր հայրերի պանդըխտութեան դաւադանը ձեռք է առնում և ճանապարհ ընկնում դէպի Կ.-Պոլիս աշխատելու: Այնտեղ էլ ծանր, անտանելի հանգամանքների մէջ է ընկնում, զգուելով՝ թողնում է Պոլիս և մի տարուց յետոյ վերադառնում է հայրենիք ու մտնում դարձեալ Լիմ անապատ:

Իր ընդունակութիւնների ու եռանդի պատճառով չի դատապարտւում միշտ այդ առանձնութեան մէջ ճգնաւորական կեանք վարելու, ինչպէս առհասարակ լինում էին, շուտով իր վրայ է դարձնում ուրիշների հետ և Շիրոյեան Գաբրիէլ եպիսկոպոսի, այն ժամանակուայ Վանի առաջնորդի ուշադրութիւնը, որը գուրս է բերում՝ կղզուց Ղևոնդ դպրին և իրան հետ տանում է քաղաք: Այստեղ Շիրոյեան եպիսկոպոսին աշակերտելով՝ հանգամանքներն աւելի նպաստաւոր են դառնում, շրջանը աւելի ու աւելի մեծանում է, սկսում է արդէն շփուել գործ ունենալ ժամանակի Վանի բոլոր յայտնի, բարձրաստիճան հոգևորականների հետ: Մի տարի յետոյ, 1855 թ. արդէն աւագ սարկաւագութեան աստիճան է ստանում իր ուսուցիչ Շիրոյեան Գաբրիէլ եպիսկոպոսից:

Հանգամանքները այսուհետև էլ աւելի նպաստաւոր են դառնում: Այդ ժամանակներն էր հէնց որ Վարազում բոյն էր դնում Արծիւը իր շուրջ հաւաքելով զանազան կողմից ճետեր. ահա ծանօթանում է սա այդ ճետերից մէկի, Գարեգին Սրուանձտեանի հետ և 1859 թ. երկուսը միասին գնում են առաջին անգամ մի ճանապարհորդութիւն անելու գիտական նպատակով՝ գտնէ այն ժամանակի համար: Երկուսն էլ շատ բան չէին սովորել, մի կանոնաւոր կրթութիւն չէին ստացել, բայց երկուսն էլ վառուել էին միևնոյն կրակով և ահա ձեռնարկում են հայրենեաց հին-հին յիշատակներ պրպտել ու կորստեան շեմքին կանգնած հայրենական սրբազան աւանդները հաւաքել: Այդ ժամանակ արդէն դրանք հասկացել էին, որ ձեռագրների յիշատակարանները անսպառ նիւթ են գրականութեան ուսումնասիրութեան համար: Այցելելով շատ վանքեր, ինչպէս Բաղէշու Ամրդուլու կամ Ամրդուլ, Կոփայ, Ղաչարու և այլն, ամեն տեղ արտագրելով պատահած ձեռագրերի յիշատակարանները, հասնում են մինչև Արմաշ ու ապա յետ դառնում:

Նախորդ տարին վախճանուել էր արդէն իր ուսուցիչ Շիրոյեան եպ., մնացել էր այժմ ինքնագլուխ բոլորովին և շատ բնական էր, որ այնուհետև ընտրէր մտնել Վարազայ միա-

բանութեան մէջ, ուր եռում էր կեանքը, կար մամուլ, դպրոց: 1859 թ. իր գրած մի ոտանաւորի մէջ ասում է. «Ես նահապետ խեղճ սարկաւադ Փիրղալէմեան տոսպեցի, իբր աշակերտ հանրածանօթ Խրիմեան հօր Մկրտչի» կայլն. ինչպէս տեսնում ենք 30 տարեկան հասակում իր վերջին աշակերտութիւնը անում է ժամանակի մեծ ուսուցչի մօտ:

Այժմուանից արդէն նրա թէ գրական և թէ հասարակական գործունէութիւնը սկսւում է, եռանդն ու ոգևորութիւնը կրկնապատկւում է և այժմուանից հէնց սրկւում է զանազան ոտանաւորներ գրել ու երգել, որոնք հէնց նոյն ժամանակ այնքան են տարածւում, որ դեռ չը տպագրած ամբողջ Վասպուրականի ժողովուրդը բերան սովորում է և հարսանիքներում ու հանդէսներում երգում, փոխանակ թուրքերէն անպարկեշտ երգերի: Յաջորդ 1860 թ. ինչ որ գործով գնում է Մուշ Վարազից և նորէն վերադառնում: Այս ճանապարհորդութիւնը, որը Վանայ ծովի հիւսիսային կողմից պտտելով հարաւային կողմից վերադառնում է, պատմում է մի երկու հազար տուն ութվանկանի ոտանաւորով, որի անունը իր կապոյտ ձիւն անունով՝ «Կապուտիկ» է կոչւում. ավստոս այս գրուածքն ևս նրա կորած աշխատութիւններից ցանկում է գրուելում: Նոյն թւին կուսակրօն արեղայ է ձեռնադրւում Վարագում միաբան ընդունուելով: Բայց այստեղ էլ չի մնում երկար, չորս ամսուայ արեղայ եղած ժամանակ դուրս է գալիս վանքից և սկսում շրջել: Այս ժամանակներ Մատթէոս կաթուղիկոսը իր մօտ ս. Էջմիածին է կանչում Վանի բարձրաստիճան հոգևորականներին, ինչպէս առաջնորդ Իգնատիոս վարդապետին, Խրիմեան Հայրիկին և ուրիշներին, որոնց հետ լինում է և Ղևոնդ արեղան: Յայտնի չէ այստեղից դառնում է յետ էլի թէ ոչ, բայց յաջորդ 61 թ. այցելելով Թիֆլիս, Քութայիս, անցնում է Բաթումով Զմիւռնիա, Կիպրոս, Բէյրութ, Յոպպէ, դուրս է գալիս Երուսաղէմ, մնում է այստեղ մի տարի պարապելով ձեռագիրների յիշատակարաններ արտագրելով: Յաջորդ տարին վերադառնում է Կ.-Պոլիս, ուր անց է կացնում նոյնպէս մի տարի, յաջորդ 63 թ. անցնում է Մուշի ս. Կարապետ Խրիմեանի վանահայրութեան օրով: Երկար չի մնում, վերադառնում է դարձեալ Կ.-Պոլիս, որտեղից մի պաշտօնական գործով իբրև պատուիրակ գալիս է ս. Էջմիածին Մատթէոս կաթուղիկոսի մօտ, ապա կրկին վերադառնում զանազան յանձնարարութիւններով: Այս ճանապարհորդութիւնը նոյնպէս գրի է առել ոտանաւորով, «Ճանապարհորդութիւն ի ս. Էջմիածին», որև նրա առաջին տպագրուած գործն է: Կ.-Պոլսից անմի-

ջապէս շտապում է Փոքր-Ասիոյ զանազան վանքեր, Մարգուա-
նայ Չար Խարան, Եւդոկիոյ ս. Նշան, Բալուայ Քաղցրահայեաց
կայն ամեն տեղ նոյն ձեռագիրները պրպտելու նպատա-
կով:

1866 թ. Նարեկայ վանահայր Յովսէփ վարդապետի խն-
դիրքով քննում է նուիրակութեան, պտղի հաւաքելու վանայ
ծովի շուրջ եղած գիւղերից, հասնում է մինչև Արճէշի, Ալճա-
ւաղի գիւղերը ու յետ դառնում: Լաւ ծանօթ լինելով խեղճ,
աղքատ գիւղացի ժողովրդի ցաւերին ու դարդերին ամեն տեղ
հաւաքում էր եկեղեցին ժողովրդին և նրա հոգուն ու սրտին
խիստ մօտիկ քարոզներով, երբեմն նոյնիսկ պարզ խօսակցու-
թեամբ հետները մխիթարութիւն ու սփոփանք էր լինում թը-
շուառներին: Նա հասկանում էր, որ նուիրակութիւնը նիւթա-
կան օգուտից զատ, ունի բարոյական և այն մեծ նշանակու-
թիւնը, որ ժողովրդին կապում է ազգային հաստատութիւն-
ների, նշանաւոր վանքերի հետ: Այսպէս յարմար առիթից օգ-
տուելով ժողովրդի հետ խօսելը, նրա ցաւերին դարման տանե-
լը իր ամբողջ ճանապարհորդութիւնների ընթացքում գլխաւոր
տեղ են բռնում: Այդպիսի վերաբերմունք արդէն ամբողջ սը-
բանց զպրոցի ուղղութիւնն էր: Այս ամբողջ ճանապարհորդու-
թիւնն ևս ոտանաւորով պատմում է «Տողիկ գրոց» անուամբ
մի աշխատութեան մէջ: Այնուհետև հէնց նոյն թւին գնում է
Աղթամար և քարտուղարութեան պաշտօն ստանձնում Խաչա-
տուր կաթուղիկոսի մօտ: Յաջորդ տարին Պոլսի պատրիար-
քարանից հովիւ է ընտրւում Զէյթունի: Մինչև 71 թ. միշտ
աստանդական կեանք է վարում, վանից գնալով Պոլիս անդամ
է նշանակւում վանքերի բարեկարգութեան համար կազմուած
յանձնաժողովի, թողնում է շուտով այդ պաշտօնը, վերադառ-
նում է էլի վան ճանապարհին այցելելով միշտ իր չը տեսած
վանքերը, այցելում է առանձնապէս Նիկոմիդիա, որի տեղագը-
րութիւնը պատրաստում: Պոլսում ընտրւում է անդամ Իգմիր-
լեան Մատթէոս արքեպիսկոպոսի նախագահութեամբ Աղթա-
մարի կաթուղիկոսական գործը քննելու համար կազմուած
յանձնաժողովի, սահմանադրութեան 28 և 3 յօդուածներ
քննելու համար կազմած յանձնաժողովի, Խրիմեան Հայրիկի
պատրիարքական հարժարագրի քննիչ յանձնաժողովի կայն:

Ապա 1873 թ. հաստատւում է Մանչեստրի հովիւ, որով
իր ամբողջ կեանքում առաջին անգամ մի 4—5 տարի մի տեղ
է մնում հաստատուած և մի պաշտօն վարում: Այստեղ այդ
ժամանակ կային 36 տուն հայ բնակիչ, որոնք գաղթել էին
զանազան տեղերից, Կ. Պոլսից, Թիֆլիսից, Շուշուց և վաճա-

ռականութեամբ էին պարապում: Անոնք վարդապետը հայրական խնամք է տանում այդ փոքր գաղթականութեան վրայ, ամեն հնար գործ դնում, որ սերտ կապուին Մայր Աթոռի, ս. էջմիածնի հետ, նամակներ է գրում յաճախ ժամանակի Գեորգ դ. մեծագործ կաթողիկոսին քաջալերական, մխիթարական ու յուսատու կոնֆակներ է խնդրում այդտեղ ընկած գաղթականութեան սիրտ տալու համար: Իբրև եւրոպայում եղած հովիւ իր նամակներում նմանապէս խորհուրդ է տալիս կաթողիկոսին, որ պէտք է աշխատել դիմել եւրոպական պետութիւններին, որ մի ճար անեն Հայաստանի այն ամեն թշուառութեանց, որոնց ինքն ակնատես է եղել և իր կաշու վրայ է փորձել նրանց տառապանքները: Այս չորս ու կէս տարուայ ընթացքում կանոնաւորում է իր ահագին հաւաքածոները, դասաւորում է ժամանակագրական կարգով: Չ'ունենալով իր մօտ, Մանչեստրրում հայկական ժատենադարան՝ գրքեր պէտք ունեցած միջոցին գնում էր Լոնդոն և օգտւում այնտեղի հոչակաւոր մատենադարանի հայկական հաւաքածուներից:

Այնուհետև 78 թ. վերադառնում է Կ.-Պոլիս և քարոզիչ նշանակւում ս. եղիայի եկեղեցում: Մօտենում էր արդէն ծերութեան, մինչև այժմ թէև շատ տեղեր էր ման եկել, շատ տեղեր նոյնիսկ մի քանի անգամ հանդիպել, բայց Հայաստանի մի մասը դեռ բնաւ չէր տեսել, ինչպէս կարող էր հանգստանալ նրա սիրտը, նա չէր եղել Պարսկաստանում, և ահա 1881 թ. թողնում է քարոզչութեան պաշտօնը և ճանապարհ ընկնում դէպի Պարսկաստան: Այցելում է Խոյ, Սալմաստ և ուրիշ տեղեր ու դառնում էլի Պոլիս: Այժմ իր հայրենիքին էլ խիստ կարօտել էր, 85 թ. մէկիկ-մէկիկ այցելելով իր ծանօթ, խիստ ծանօթ գիւղեր ու քաղաքներ, աւաններ ու վանքեր դառնում է Վան: Երկու տարի ամբողջ մնում է այստեղ, վերջին փափագըն էլ առնում է բաղմաթիւ բարեկամներից ու ազգականներից, հայրենի հողից ու ջրից և 87 թ. բոլորովին թողնում Վան, գնում Պոլիս:

Շատ տեղեր փորձել էր դիմումներով իր ստուար աշխատութիւնները տպագրել տալու, բայց միայն մի քանիսը էր յաջողեցրել: Մի վերջին դիմում էլ է անում այստեղ լոնդրելով պատրիարքին, որ օգնեն տպագրութեամբ ի լոյս ընծայէ այդ գործերը, ի մխիթարութիւն իր ծերութեան, բայց լսող չի լինում: Վերջապէս ջախջախւած ամբողջապէս զրկանքներով լի վարած չարքաշ կեանքի հարուածների տակ, թողնում է թափառական կեանքն ու աստանդական վարած պաշտօնները,

քաշուում է Երուսաղեմ հանգստանալու, ուր գնում է յաւիտե-
նական հանգստի գիրկը:

II

Կենդանութեան ժամանակ Ղևոնդ վարդապետը իր աշխա-
տութիւններէից միայն չորս կտոր գիրք է կարողացել իւրոյս
ընծայել տպագրութեամբ, որոնցից առաջին երեքը բոլորովին
ինքնուրոյն չափաբերական գրութեան են, իսկ չորրորդը վեր-
ջին ժամանակագրութիւն, յիշատակներից հանած՝ «Նօտաքը
Հայոց» անունով: Երեք չափածոյ գրութեանցից մէկը մի քա-
նի բանաստեղծութիւնների ժողովածու է «Տաղերգութիւն բա-
րոյական և ազգային» անունով, իսկ միւս երկուսը ճանապար-
հորդական նկարագրութիւններ: Առաջինի մէջ կան 15-ի չափ
ինքնուրոյն բանաստեղծութիւններ, որոնցից իւրաքանչիւրն ու-
նէր առանձին եղանակ և ինչպէս յիշեցինք, դեռ չը տպուած
արդէն երգում էր ժողովուրդը:

Բերենք դոցանից մէկի կտորները իբրև նմուշ նրա բա-
նաստեղծական ընդունակութեան, «Բանք Վարազայ առ Նահա-
պետ և արձագանգ Նահապետին» (Նահապետ իր կեղծ անունն
է): Պատմում է այստեղ թէ մի անգամ ինքը Ներքին Վարազից
բարձրանում է Վերին Վարագ, այնտեղ վերջինս դիմում իրան,
որ գրիչ ու թուղթ առնէ, ինքը իր ցաւերը, առաջուան փառ-
քերը կը պատմէ նրան և հրամայում.

«Տճր ստորոտս Վարի Վարագն ասս տպեն.
Ոսկեփետուր Արծույ թւին վրայ դնեն,
Իմ գաղթական սիրուն որդոցս ան ուղարկեն,
Իցէ թերևս նոքա հիքոյս ճար մի գտնեն»:

Նահապետը իր անկարողութիւնն է առաջ բերում, սակայն
վերջը ստիպուած է լինում հնազանդուել:

Վերին Վարագը սկսում է պատմել թէ ինչպէս Հոռմից
թագաւորազն օրիորդներ իր մօտ են եկել, սուրբ Նշանը այդ-
տեղ թողնելով հեռացել ու Վաղարշապատում նահատակուել,
ինչպէս Գ. Լուսաւորիչը մկրտեց ահագին բազմութիւն Եփրա-
տում, ինչպէս կռատները քանդեց եկեղեցիներ շինեց, «որոնց
մէջէն մէկն ալ ես եմ (Վարագ) պատմող բանիս, որ պարծա-
նաց պարծանք եղայ Տոսպ գաւառիս»: Ապա մտածում է այն
դարի մասին, երբ ս. Նշանը թողել ճգնաւորի աղօթքներով
«Թուա սարէն, եկաւ նստաւ» իր «սուրբ սեղան», «շատ հը-

բաշքներ նոյն միջոցին տեսնուեցան»։ յետոյ անցնում է Վարդպատրիկի իր տաճարի հիմքից ի վեր նորոգելուն և այնուհետև թէ ինչպէս չորս կողմից գալիս ու «կենաց փայտին» ծառայութեան մտնում։

«Ես (Վարագ) ան ատեն թագունւոյ պէս պարծենայի, Վասպուրական վանօրէիցն ալ իշխէի»։

Յետոյ ինչպէս միաբանները կամաց-կամաց փախել են, ինքը մնացել է մենակ, աւագակները կողոպտել են, վերջէն վառօդն է միայն կարողացել քանդել հիմքից ի վեր։ Յոյց է տալիս Նահապետին շուրջը եղած աւենակների մնացորդներն ու ցիր ցան քարերը ասում։

«Ողբեր շինէ, լաց ու պատմէ հայոց աւերս,
Արդեօք կարծես, որ գթան յիս հայ զաւակներս»։

Նահապետը յոյս է տալիս, որ հայերը նրա «համար պիտի չինայեն իրենց գանձին»։ Վարագը յոյս է առնում մի քիչ, իսկ Նահապետը տխուր սրտով լալիս է և չը կարողանալով այլևս համբերել թողնում է հեռանում։

Այս ոտանաւորը Վարագայ նոր միաբանը գրում էր այն ժամանակ, երբ արդէն Վարագը սկսում էր կամաց-կամաց ծաղկել, իր նախնի փառքի ստուերին գոնէ մօտենալ։

Միւս թէ տպած և թէ անտիպ չափածոյ գրած ճանապարհորդութիւնների մէջը թէև նոյնպէս չը կայ ոչ մի գեղարուեստական միութիւն, այլ լոկ ճանապարհորդական նկատողութիւններ են, բայց կենդանի լեզուի, ճշգրիտ նկարագիրների և պատմական ու աշխարհագրական հարուստ տեղեկութիւնների, մանաւանդ անձնական տպաւորութիւնների բանաստեղծական արտայայտութեան համար աւելի հետաքրքիր են դառնում, քան եթէ ուրիշ շատ ճանապարհորդութիւններ. «Ճանապարհորդութիւն ի ս. էջմիածին և անտի ի Կ.-Պոլիս» լինելով իր գրչի առաջին փորձը այնքան էլ լրիւ չէ, ինչպէս օրինակ «Չորս ընկերք», այս կարելի է ասել, ուղղուած է ամբողջովին այն մեծ վիշապի դէմ, որ մինչև մեր օրերն էլ քարուքանդ է անում հայու օջախը, դա պանդխտութիւնն է։ Այստեղ ամեն հնար գործ է դնում ընթերցողին հասկացնելու, նրա սրտի վրայ ազդելու, որ պանդխտութիւնը կործանում է իրան էլ, իր ընտանիքն էլ, իր ազգն էլ։ Հակադիր պատկերներով, Պոլսի

խաների անկիւններում պարապ, քաղցած թափառելը և գեղեցիկ հայրենիքի ընտանեաց քաղցր գրկում անցկացրած կեանքների մէջ եղած զգալի զանազանութիւնը պարզ դնում է ընթերցողի առաջ և երբեմն խրատելով, երբեմն համոզելով քաղցրորար, երբեմն դառն նկարագրութիւններով հասկացնում է ընթերցողներին, որ թողնեն պանդխտութիւնը և հայրենիք վերադառնան: Թէև քննում է պանդխտութեան պատճառները, յաճախ տեսնում է, որ քիւրդերի, թուրքերի բարբարոսութիւնների պատճառով է որ աղքատանում ու ճարահատեալ գնում են փող աշխատելու, բայց էլի գտնում է ճար, միջոցներ է առաջարկում, ինչքան որ իր խելքը հասնում է:

Այս գրքի հերոսներից մէկը ինքն է, որ պանդխտութեան է դիմում առաջին անգամ երիտասարդական հասակում: Խիստ սրտառու է կերպով է նկարագրում սիրելիներից, հայրենիքից բաժանուելու տեսարանը, ապա կարաւանի ճանապարհին կրած նեղութիւնները, վախն ու երկիւղը աւազակներից: Նկարագրում է կարաւանը իւրաքանչիւր տեղ որ իջնում է մի գետի կամ մի գով աղբիւրի վրայ, նրանց մէջ եղած աշուղներ դառնացած սրտով և յուզիչ ձայնով նուագում ու երգում են զանազան տխուր երգեր, լաց լինում և լացացնում ու յիշեցնում են նրանց իրանց տուն, տեղ, ընտանիք, երեխաներ, աշուղները նստում են աղբիւրի վրայ և երգում ու լալիս, իր շինած հետեալ երգը պանդխտութեան գնացած մարդու կնոջ բերնից.

«Մաշտէմ ¹⁾ իրիկս մկայ ²⁾ դժբ ի,
Ո՞ր խանի քունջ կծկուեր ի,
Ուր խեղճ կնիկ միտ կը բերի,
Թէ ճիփ ճիփ ³⁾ ան, ձիկ ⁴⁾ մոռցեր ի:

Գիշեր ցերեկ ես ինքն ապով ⁵⁾
Կուլամ, կուրցաւ աչքերս լալով,
Որբեւէրու պէս նստելով,
Կընցուցեմ օրս ախուլախով» Լայլն:

Իւրաքանչիւր երեսը, իւրաքանչիւր տողը թշուառութիւն է արտայայտում, թշուառութիւն ներկան նկարագրելիս, թշուառութիւն՝ անցեալ, պատմական նշանաւոր դէպքերը յիշելիս: Երբ Երասխի ափին իջևանում են, կարաւանի երգիչները

¹⁾ Արդեօք: ²⁾ Այժմ: ³⁾ Ամողջովին: ⁴⁾ Ինձ: ⁵⁾ Համար:

երգում են «Մայր-Արաքսի» և ուրիշ երգերը, իր գրքի մէջ ամբողջ գետի աշխարհագրական ընթացքը պատմելուց յետոյ յիշում է ի միջի այլոց և Շահաբասի այդ գետից հայ գերիներին անցկացնելը:

«Աւաղ բազումք իբրև ծաղիկ նոնենեաց,
Ընդ անցանելն ջուր թափեցան ի նեղչաց.
Քանի որդիք և օրիորդք սըբակեաց,
Անդիւտ կորեան՝ և թողին սուգ հար և մարց» ևայլն:

Դառնացած անիծում է այն «քարասիրտ, տմարդի» գազանին և յայտնում իր զայրոյթը երկնքի դէմ.

«Երկինք, ընդէ՞ր աստ մնացիր անտարբեր,
Եւ փակեցիր պատեանիդ մէջ քոյդ սուսեր,
Հաճոյ չեղէ՞ն քեզ մըմունջը հայ մաղթանաց,
Հայրապետաց, քահանայից, կուսանաց» ևայլն:

Համեմատելով հայուն պարսկի, հազարացու և ուրիշ ազգերի հետ ինքնիրան հարցնում է.

«Է՞ր վասն նոքա կան ահարկու և պայծառ,
Իսկ մենք նոցա ստրուկ՝ գերի հարաչար»:

Ամեն պատմական քիչ ու շատ նշանաւոր տեղերի անցեալ փառքն ու դժբախտութիւնները գրի է առնում: Կարնոյ մասին տալիս է բաւական ընդարձակօրէն տեղագրութիւն, պատմական անցեալի նկարագրութիւնը անելուց յետոյ սրտաշարժ կերպով պատմում է վերջին դարերի այդտեղ եղած վկաների ու վկայութիւնների նահատակութիւնը, ինչպէս օրինակ Վառլառէ նահատակուհու մասին, որ երբ յանձն չէ առնում մահմէդականութիւն՝ կուսակալը հրամայում է կախել, իսկ նա պատասխանում է.

«Ես պոռնիկ չեմ, որ զիս հանես կախաղան,
Խնդրեմ ի քէն, տուր ծառայիդ հրաման,
Զիս գլխատել հրապարակաւ անխափան»:

Պատահած տեղերը չի մոռանում և նկարագրելու գիւղա-

կան կեանքը, նրանց դաշտային աշխատանքը և այլն: Ահա թէ առաւօտեան ինչպէս է գործի սկսում գիւղը.

«Շինից ելան փութան ի դաշտն ցնծալով,
Հովին փողով, մաճկալ հօտաղ՝ կիւթանով,
Զրկալն բահով, սերմնացան իւր մէղարով.
Վիժկաւորն ևս բաշ ու պոլատ ջուխտ եզնով:

Վերջապէս Պոլիս են հասնում, այստեղ իր հայրենակիցներին հետ տեսնուելը միջոց է տալիս երկար կանգ առնելու պանդխտութեան փտեցուցիչ ախտի վրայ: Իր ընկերներից մէկը, աւելի տարիքաւորը հաւարում է շուրջ բոլոր պանդուխտներին, որոնք եկել էին տեսութեան, տալիս է իւրաքանչիւրին երկրից բերած նամակը և ապա սկսում մի երկար խրատ ու յորդոր, որով համոզում է հայրենիք վերադառնալ, իրանց սիրելիների հետ միասին ապրել: Նկարագրում է մի քանի կեդտոտ ծառայութիւններ, որոնց մէջ փշանում են թէ բարոյապէս և թէ ֆիզիկապէս Հայաստանից եկած մաքուր ու առողջ երիտասարդները, և դրա միակ ճարը, որքան կարելի է շուտ հեռանալ ու էլ չը վերադառնալ:

Այստեղ խօսքը քանի որ ազգի ցիրուցան, քարուքանդ լինելու մասին է, դանց չի անում և այդ բանին նպաստող ուրիշ շարժառիթներն էլ յիշելու: Դրանցից ամենամեծը, ազգի գոյութեան ամենագորեղ թշնամին կրօնափոխութիւնն է համարում և մէկ առ մէկ թւում նրա հասցրած վնասները...

Յետոյ անցնում է ազգի անմիաբանութեան, պառակտման վնասներին, յորդորում է միանալ: «Մենք ենք պատճառ» աւում է, «որ քիւրդ դարձեր է գազան». բերում է պատմական օրինակներ, թէ միութեամբ ինչեր են կարողացել անել հայերը Կարնում, պարսաւում է հայերի մեղկութիւնը, թուլութիւնը:

Այս գրքի նմանութեամբ է գրուած և միւս երկու անտիպ ճանապարհորդութիւնները, որոնցից մէկ «Կապուտիկ»-ը ինչպէս յիշեցինք անյայտ է որտեղ լինելը, իսկ միւս «Տողիկ գիրք»-ը յայտնի: Չորս տետրակ է սա, որի մէջ տասնամէկ վանկանի ոտանաւորով մանրամասնօրէն պատմում է 66 թ. իր Նարեկալ նուիրակութեան համար արած ճանապարհորդութիւնը: Ունի և վեց տետրակ ծանօթութիւններ ամբողջ, որոնցով լրիւ տեղեկութիւններ է տալիս ոտանաւորի մէջ եղած իւրաքանչիւր քիչ թէ շատ մութ կտորների, աշխարհագրական տեղերի, պատմական անձնաւորութիւնների, ժողովրդական սովորութիւնների, վարք ու բարքի մասին. այս ծանօթութիւններ-

ըր, կարելի է ասել շատ աւելի հետաքրքիր ու շահեկան նիւթեր են պարունակում, քան բուն գիրքը:

Այս գրքի մէջ միւսներից աւելի ընդարձակ և մանրամասն է պատմում ամեն ինչ: Կանգ է առնում ազգաբնակչութեան որպիսութեան վրայ, յիշում է մանրամասնօրէն իւրաքանչիւր իր այցելած և նրա մօտիկ գիւղերը, թէ որքան բնակիչ ունի իւրաքանչիւրը, քանիսը հայ, քանիսը քիւրդ կամ ուրիշ ազգ, ունի՞ն եկեղեցի հայերը, ինչպէս է կոչւում, երբ կամ ո՞վ է շինել, քահանայ կա՞յ և քանի՞ հատ եայլն:

Այս աշխատութեան մէջ իւրաքանչիւր վանք այցելելիս, նախ յիշում է թէ ինքը ինչ դրութեան մէջ է գտել վանքի շինութիւնները, տնտեսական վիճակը և ապա սկսում նոյն վանքի հիմնարկութեան օրից անուանէ անուն, ժամանակագրական կարգով թեւ լինում և վանահայրերի անունները, իհարկէ, որքան իրան ծանօթ է պատմագիրներէից, իր հաւաքած յիշատակարաններից, արձանագրութիւններից և խաչարձաններից ու հասցենում մինչև իր ժամանակը, ինչպէս օրինակ Աղթամարի *) բոլոր կաթողիկոսների համառօտ գործերը, Մեծփայ, Վարազդայ կայլ վանքերի վանահայրերի ցանկն ու իւրաքանչիւրի գործերը:

Միւս գրքերի պէս սրա մէջ ևս գլխաւոր տեղ է բռնում բնութեան նկարագրութիւնը: Ինքը ունենալով բանաստեղծի խառնուածք, մանկութիւնից կեանքը անցկացրած լինելով բանաստեղծական վայրերում, ամենայն զգացմամբ ու պատկերաւոր արտայայտում է իր տպաւորութիւնները: Օրինակ, խօսելով մի տեղի օգի, ջրի, ապա հացահատիկների մասին աւելացնում է.

«Հասկ կապելով զով հովու դէմ պար խաղան,
Ծովու հեզիկ ալեաց նման կու ծփան,
Եւ դիտողաց խլեն հաճոյս նոյն ժամայն.
Ի՞նչ խօրօտ է և աղուոր այս տեսարան»:

*) Ի դէպ. նոյն այս Ղևոնդ վարդ.-ի զբաժնով Աղթամարայ կաթողիկոսների պատմութիւնն էր որ ոմն բանագործ Խաչատուր Լևոնեան մի քանի դուրուշներով գնել էր նրա ժողովներից ու նախ Պոլսոյ «Քիւլանդիոն» թերթում հրատարակեց և ապա այս տարի իր անփական գործ առանց ամաշխուհեցիկայացրեց «Մահակ-Մեսրոբեան» մրցանակաբաշխութեան և խաբերայութեամբ կարողացաւ տանել մրցանակը: Ժամանակին այդ մասին բողոքներ եղան Պոլսոյ թերթերում, բայց մրցանակաբաշխութեան մասնաժողովի պատուարժան անդամները չը կարողացան ստուգել վերահասու լինել խնդրի էութեանը:

Ամբողջ ճանապարհորդութեան ընթացքում բնաւ բաց չի թողնում ուշադրութիւնից բնութեան հրաշալիքները, ծովը, գետեր, լեռներ, ձորեր, դաշտեր, արևը, լուսինը և այլն: Առանձնապէս կանգ է առնում իր այցելած տեղերի մասին եղած աւանդութիւնների վրայ: Բերենք այդ տեսակից էլ մի օրինակ: Պատմում է թէ ինչպէս Սենեքերիմ թագաւորի աղջիկ Շուշանը, երբ կամենում էր Վարազայ հսկայ լեռները ձեղքելով՝ այնտեղի առատ ջրերից մի առու հանել Աստղբերդ լեռան լանջին շինած իր անուռով հիմնուած Շուշանց գիւղի համար, ինչպէս կէս ճանապարհին ծախսը պակասում է, և թագաւորազն օրիորդը վերջիվերջոյ իր մտադրութիւնը գլուխ բերելու համար ծախում է իր թանկագին ապարանջանը և աղբիւրը հանում: Դրա համար էլ կոչւում է Ապարանջան աղբիւր, որ կայ մինչև մեր օրերը: Այս աւանդութիւնը պատմելուց յետոյ աւելացնում.

Ապարանջան նազելի՜ յորդ պաղ վտակ պատուական,
Մայիսի մէջ քո չորս շուրջ քանի՜ կերպ-կերպ ծաղկունք
կան,
Ի՜նչ անուշ հոտ, ի՜նչ բուրումն, գրիչս չկարէ տողել զայն,
Բիւր երանի տամ նոցա՝ որ ուրախ սիրտ առ քեզ գան:

Որջապատեր է զքեզ անուշաբոյր գինեբրոյն,
Որ մերձ յականդ բացուեր է ի գիրկս մարգաց զո-
վասուն,
Կարմիր կակաչ և լալան ինչ խօրօտիկ և սիրուն,
Պարեն, խաղանք հանդէպ մեղմ գեփիւռով օրն իրուն:

Այս տողերը գրել է պանդխտութեան մէջ. շարունակութեան մէջ արտայայտում է իր վիշտը, որ հեռու է գնաւում այդ գեղեցիկ վայրերից և ուխտ է անում ինքն իրան, եթէ հայրենիք վերադառնայ, անպատճառ կը գնայ ու կը տեսնի իր մտերիմ ու պաշտելի ծանօթ տեղերը:

III

Իր ասելով ամբողջ շրջագայութեան ժամանակ մօտ 6000 ձեռագիր է անցկացրել ձեռքից և ինքն արտագրել է դրանցից այն ամենը, ինչ որ անհրաժեշտ ու պէտքական է համարել: Այդ բոլոր նիւթերից կազմել է զանազան ժողովածուներ, որոնցից յայտնի են առայժմ հետեւեալները.

ա, «Յիշատակարանք կամ նշխարք պատմութեան Հայոց»
22 տետրակ (պէտք է լինէր 23) ՅԼԶ—ՌԽՆ (հ. թ.), յիշատա-
կարանների ժողովածու է, որոնցից մի քանիսը վերցրել է զա-
նազան հրատարակած գրքերից, ունի և մի քանի ծանօթու-
թիւններ.

բ, «Նշխարք պատմութեան Հայոց».

գ, «Հաւաքածոյ արձանագրութեանց».

դ, «Պատմական-վիճակագրական տեղեկութիւններ».

ե, «Զանազան ժամանակների անցքեր».

զ, «Ստորագրութիւն Եւզոկիոյ».

է, «Թւականացոյց ցանկեր».

ը, «Ժամանակագրութիւն».

թ, «Զանազան պատմագրներէ քաղուածոյ բանք».

Նրա թղթերից ու գրքերից որքան կարողացանք հաւաքել,
հետեւեալները կորած են, որոնք աւելի շատ կարևոր են քան
վերոյիշեալները.

ա, «Պատմական տեղեկագրութիւն Վանայ».

բ, «Գաւառական բառք».

գ, «Մասնաւոր տարեգիրք», որոնցից մի քանիսը միայն
հազիւ են հրատարակուել, այն էլ անպատճառ ուրիշ
օրինակից: Այդ կորսուած տարեգիրքները հետեւեալ-
ներն են.

1, Սիմէօն վարդապետ բախուանցի,

2, Գրիգոր Ծերենց հահատակ խալաթեցի.

3, Մինասենց Թումա վարդապետ աղթամարցի.

4, Յովհաննէս կրօնաւոր արճիշեցի.

5, Մովսէս քահանայ արճիշեցի

6, Բարսեղ քահանայ արճիշեցի.

7, Յովհաննէս քահանայ արճիշեցի.

8, Բարսեղ վարդապետ վարազեցի.

9, Գրիգոր վարդապետ կամախեցի.

10, Վարդան վարդապետ բաղիշեցի.

11, Դաւիթ վարդապետ բաղիշեցի.

12, Գրիգոր դպիր վանեցի.

13, Բարդուղիմէոս վարդապետ շուշանցի.

14, Անծանօթ տարեգիր վանեցի.

15, Պէյլար վանեցի.

16, Մուրադխան վանեցի.

17, Նաղար վարդապետ թլեցի.

18, Անանուն տարեգիր վանեցի.

19, Յովհաննէս արքեպիսկոպոս սերաստացի.

20, Յարութիւն քահանայ Խալֆայեան վանեցի.

21, Յակոբ եպիսկոպոս Թոփուզեան վանեցի.

22, Սարգիս քահանայ.

23, Յովսէփ վարդապետ լմեցի:

Բաւ ենք համարում այսքանը, թէ և արժէր աւելի երկար
 Վանգ առնել այդ ժողովրդական համեստ մշակի գործունէու-
 թեան վրայ, որոնց նմանները դժբաղդաբար մեր ժամանակում
 շատ սակաւ են պատահում: Նա վախճանուեց 61 տարեկան
 հասակում. և նրա մահուամբ հայ բազմակարօտ գիւղացին կոր-
 ցնում է մի անխոնջ այցելու հովիւ, իսկ հայ բանասիրութիւնը
 վերոյիշեալ կարեոր ժամանակագրութիւնների կորստելով
 զրկւում է այն լուսաբանումներէր, որոնք տեղի կ'ունենային,
 եթէ հրատարակուէին:

Մ.